ւորութեան մէջ այնպիսի վէճ բացաւ, որ նոր ժամանակներս աւելի մեծանալով, սկսում է ազգութեան միութեանը սպառնալ։ Այս պատճառով այստեղ այս հարցը առաջ է գալիս թէ ինչպէս յարաբերւում ազգութեան իշխանութիւնը, օրէնսդրութիւնը գործաւորները արդիւնքի հետ Սեղայ թէ՝ մենք կամենանք այստեղ մի քանի խօսքերով այս մեծ խնդիրը լուծել, քանի որ այս տարուայ ամենամեծ մտածողները իրանց պատմութիւնը մինչև այժմ զուր կրկնեցին որս վրայ։ Աւելի մեր դիտաւորութիւնն է միայն զանազան ընկերական ձևերը ներկայացնել, որոնք ժամանակիս ընթացքին մէջ կազմուել են, և վերջը այն կէտը նկարագրել, որի վրայ, մեր հայեացքով, ազգութեան կառավարութիւնը գործաւորներու հարցի դէմ ու դէմ կանգնելու է։ Ահա այս հետևութիւնը ձևերն են զանազանելու։

Ի յաջորդն։

---

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

---

## ՍՈՅՆ ԱՄՍՈՅ ՄԷՋ ՊԱՏԱՀԱԾ ԱՆՑՔԵՐԸ

12 Աղէքսանդրից մեր արգոյ Թղթակիցը կը ծանուցանէ ազգային բարեխնամ վարչութեան կողմանէ Ս. Աթոռոյս տեղական կալուածոց արդար խնդրոյն քննութեան համար խրկուած փաստաբանական աշխարհին բարեխնամ Առաջնորդ, և միաբանութեանս կողմանէ երեսփոխան կարգուած. Գեր. Տ. Տ. Իգնատիոս և Սիմէօն Սրբազան Արք Եպիսկոպոսունք խաղաղութեամբ ժամաներ են յիշեալ նաւահանգիստը և արժանաւոր պատուով հիւրընկալուած են ազգայնոց կողմանէ։

Այն ծանրակշիռ խնդրոյն վերայ մինչ ցարդ միաբանութեանս յարգած լռութիւնը ազգային բարեխնամ Վարչութեան արդարոյսի գաղտողութեանը մասին էր, նկատելով թէ անշուշտ վախճան մի պիտի առայ. և մանաւանդ ազգային լրագրաց ոմանց ճշմարտութիւնը քաջ ճանաչելով ըրած դիտողութիւններն էր, որ զմեզ հարկադրեց լռել առ ժամ մի, տեսնելու հետևութիւնը. Միաբանութիւնս գոհ է Ազգային վարչութեան ըրած ընտրութեանը, այն է Գեր. Իգնատիոս Սրբազան Արք Եպիսկոպոսի նման բարեբարոյ և քաղաքագէտ անձ մի այսպիսի խնդրոյ մի քննիչ ու իրաւարար կարգելուն. Իսկ նորին Սրբազնութիւնը ալ անշուշտ գիտէ իւր պաշտօնը որ մահու և կենաց խնդիր մի է. Առ այժմ այսչափ միայն կը խօսինք և կ'սպասեմք ժամանակին տալիք պտղոյն.

17 Կարսի նախկին առաջնորդ Գեր. Տ. Յովհաննէս Սրբազան Արք Եպիսկոպոս Աշտանեի անօրինական Ս. տեղեաց ուխտ մատուցանելու նպատակաւ հասաւ ի սուրբ Աթոռս։ Ամեն. Ս. Հայրը լսելով նորա գալուստը ընդ յառաջ մի վարդապետ և մի Եղբայր խրկեց ի պատիւ։

19 Լեհացի դժբաղդ հրեայ մի գիշերը քունը գլուխը դուրս ելնելուն՝ անզգուշութեամբ ջրհորի մի (սարնիճ) մէջ ինկալով անմիջապէս ջրասոյզ խեղդուեցաւ։ Ահա անզգուշութեան մի արդիւնք. քանի՜ներ այսպիսի յանկարծական զոհեր են իրենց կեանքը. անզգուշութիւն մի, ջրհորոյն և այլն բերաններն չգոցել, և ոչինչ առիթով մի կեանք մի տալ. և եթէ մխիթարուելու առիթ մի ունենալ, ըստ հեթանոսական մոլար գաղափարաց, ի՜նչ ընենք Ճակատագիրն այսպէս է եղեր։ Ո՜վ տգիտութիւն՝ մինչև ցերբ քու սեւաթոյր քողդ մարդկային ազգի վե-

րոյ թանձրամած սխալներն է ։

— Ռուսիոյ արդարասէր կառավարութիւնը որ իւր ամէն հպատակաց վրայ միապէս գութ ու խնամք ունի, Ռուսիոյ մեծանուն կառավարութիւնն կ'ըսեմք որ իւր հըպատակներ ջանից արդեամբք վերջին օրերս իւր իշխանութեան աթոռը՝ բարձրացոյց Լեւքաղից Կայսերաց հաւատար, և լսէ թէ պատուանունն ալ ժառանգէ. Ս. քաղաքիս բնակչաց խորին շնորհակալութիւնն ընդունելու պատճառըն ու սուրթն ունեցաւ իւր մեծագործութեամբը. քաղաքիս մէջէն անտանելի և միանգամայն զզուելի առարկայ մի վերցնելով։ Ինչպէս գիտէ ամէն ոք ուրկանոց (միսկինլիք) անունն փոխադրական ըլլալը, և դժբախտաբար շատ քաղաքներու մէջ կը գտնուին ուրուկներ, բայց միայն համար քաղաքէն դուրս տեղ յատկացեալ է. (Ինչպէս Կ. Պոլսոյ մէջ Իւսկիւտարի կողմը). այս բարեբախտութենէն սուրբ Քաղաքս զրկուած էր. և որ աւելի ցաւալին էր Ս. Աթոռոյս ամենամօտակը բնակած էին. այնէ հարաւային կողմը պարըսպին բոտ արարեալ ոյ կոչուած դրան մօտ. որ բառ մեզ Փրկչոյ դուռն կ'անուանի։ Անօրոդաց և յանձախորդաց մեծ զզուանք կուտային իրենց անհրէս մուրացկանութեամբը, և շատ ժամանակ մնանուոր գանկատներ կըլլուէր անտարբերութեան համար։

Այս զզուելի բնակիչները Ռուսիացի այցելուաց ուշադրութիւնը գրաւելով, իրենց կառավարութենէն խնդրած էին միջոց մի գտնել անոնց բարձմանը Ս. քաղաքէս Ռ. Կառավարութենէն խնդրելու։ Արդարասէր կառավարութիւնը. առանց յնասելու նոյա (ուրուկներուն) իրաւանց, իւր կառավարութեան պաշտպանութեան ներքեւ ընկերութիւն մի կազմելով յատուկ տեղ մի հաստատել որոշեց նոցա բնակութեան, և քաղաքէս դուրս արեւմտեան հարաւային կողմը մեծ շէնք մի շինել տալով, և ամէն պիտոյքը հոգալով. առ այժմ կ'չուէն աւելի այնտեղ ժողվեց, և որ բառ օրէ մնացածներն ալ։ Այս մեծագործութեամբը մեծանուն կառավարութիւնը և բարեսէր ընկերութիւնը ոչ միայն Ս. քաղաքիս բնակիչները երախտապարտ ըրին իրենց, այլ և ամէն զանազան ազգաց այցելուները և ուխտաւորք։

Այս տողերը գրած ժամանակնիս լսեցինք Անգղոյին սուրբ Փրկչեան հիւանդանոցի արդի նեղ վիճակը. զոր Անգղոյին լրագիրք ցաւ 'ի սիրտ գուժեցին. և որ աւելի ցաւալին է՝ Մեծ. Փանոսեան Կ. Էֆէնտիին ազգին աղքատախնամութեան վրայ ունեցած յոյսը դերեւ ելնելուն անձնելուն հրաժարիլը. Երբ կ'ըսեմք այս տողերը կը գրեմք առանց կարմրելու չկարողացանք մտքէց յանձնել։ Անգլու կրօնքով տարբեր ժողովուրդ մի հեռաւոր քաղաքներու Թշուառաց օգնելու նպատակաւ Նորձրաղոյն Կառավարութե մի կը բողոքէ, և կառավարութիւնն ալ պահ մի իւր առանձին գործերը մէկդի ձգելով, կորեկցաբար օգնելու կը մտածէ, և մտածութեան արդիւնքն ալ գործով կը կատարէ. Մինչ մենք ազգաւ կրօնքով մի, և լսէ թէ շատերնուս ամենամերձ ազգականը՝ գուցէ ծնողնիս կամ եղբայրնիս պատսպարող շէնքի մի Թշուառութեանը վրայ չի՛ պիտի մտածենք։ Եթէ չմտածելու չափ անտարբեր գտնուող անձ մի կայ, առանց կեղծի կ'ըսեմք, այնպիսին մարդկութեան Թշնամի է։ Մեծ. Անգլայինք՝ օգնելու եկէք՝ որչափ կարողութիւննիդ կը հասնի. օգնելու եկէք աղքատաց՝ որոնք միմիայն իրենց յոյսը անհատի լումային վրայ դրած են. օգնելու եկէք, որպէս զի ընդունիմք այն երանին, զոր կու տայ կամաւ Աղքա

տակէայն. « Երանի ողորմածաց զի նոքա ողորմութիւն գտցեն »։ Մենք փառք եմք ի Պօլսոյ աղքատասէր հասարակութեան որ բազմաթ՝ և կարօտելոց միակ մխիթարութեան աղբիւրանոտանը անխնամ չթողուր, իւր դարերէ 'ի վեր տուած անունը չի մոռցնելու համար, այն է Պոլսեցիք աղքատասէր են. որով Մեծ. Փանոսեան էֆէնտին ալ խորհուրդով կը յարատեւեցնէ իւր ազգօգուտ գործը, որուն յաջողութեանը աղօթող և փափաքող եմք.

—Երեկոյ առաջացած ցուրտը բաւականի եղաւ. շատերը կը վկայեն մինչ ցարդ այսպիսի ցուրտ չըլլալը. չորս Սուրբ ուխտաւորք կանոյք զոհ եղան այս նոր ցրտէն. հայր Աբրահամ (Կալիկ Բահման) անուանեալ քարաքէն վերադառնալուն՝ ալք Սկիլթի քարերուն դարբէն ուխտ ընկլգացած էին.

—Ժամանակէ մը 'ի վեր Ս. քաղաքիս մէջ զանազան գողութիւններ կըլլայ, և կառավարութեան մինչ ցարդ եղած խուզարկութիւնքը արդիւնք մը չունենալուն՝ տիրացեալ բոլոր կասկածելի Ֆէլլահները բանտարկել և մանր քննութեան տակ ձգել.

—Կիլիկիոյ վիճակէն. այսինքն Զէյթուն, Մարաշ, Էնթապ և այլ քաղաքներէն և գիւղերէն 160 էն աւելի բարեպաշտ ուխտաւորք յաջողութեամբ Ս. Երուսաղէմ հասան և տակաւին շատերն ալ գալու են. Այս ջերմեռանդ ուխտաւորները իրենց հետ քանի մի նամակներ բերած են տեղական իշխաններէն և եկեղեցականներէն, որով նախ շնորհակալութիւն կը մատուցանեն Աթոռոյս Ս. Պատրիարքին Զէյթունի իշխանաց վերադարձին և զըրկոյներու վրայ ունեցած խնամքին, և տակաւ կը յայտնեն որ կրօնափոխութիւնը իսպառ վերցուած է, Զէյթունի հռովմէական վարդապետը հեռացած է, պարզամիտ և խաբուած կրօնափոխները վերստին իրենց մայրենի եկեղեցւոյ ծոցը դարձած են, և քանի մի թաղերուն մէջ հազիւ թէ երկու-երեք անձինք մնացած են, որ նոքա ևս անշուշտ պիտի դառնան.

Այս լուրերը խիստ ուրախական են և նամակներու մէջ հրատարակութեան արժանի տեղեկութիւններ շատ կային, ամսաթերթիս տպագրութիւնը արդէն լրացած ըլլալով՝ կը թողումք ուրիշ ժամանակի. Միայն այսչափը կ'ըսեմք, որ բոլոր նամակները միաբերանաւ ՑԻՍՈՒՍ կ'աղաղակեն. Աթոռոյս կարողութիւնը այնչափ կը ներէ, որ միայն դասական գրքեր կ'ուղարկէ, ինչպէս առաջ ալ գրուած է. Բայց երանի թէ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը ևս զանէ մի քանի հաստատուն դաստիարակներ ղրկէր. Արդարև շատ ցաւալի է և Ազգային զգացմանց դէմ, եթէ դաստիարակութեան կողմէն անխնամ մնայ այն ժողովուրդը, որ թէպէտ իւրն անձեռնհաս է, բայց իւր կարօտութիւնը զգալով կը գոչէ այսօր. « Ո՛վ Զէյթուն, հէգ հայրենիք. քու թշուառութեանդ միմիայն դարման ուսումն է, ուսմամբ միայն կրնաս ստանալ քու յառաջադիմութիւնդ և ուսմամբ միայն կրնաս պահպանել քու առաջին գոյութիւնդ »։

---

## ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

Ինչ որ կ'ուզես ընեն ուրիշ մի քեզ. նոյնը ըրէ անոնց
Աւետարան.

Թէ շատ խօսիս կըլլաս շաղակրատ, թէ քիչ՝ անգէտ. ուրեմն մտածէ.

Իմաստուն.